

երկուլաբլի, ապրիլի 30-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստի ժամանակ, քաղաքագլուխը յայտնեց, թէ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը պաշտօնական տեղեկագրութիւն է ստացել, որով յայտնվում է, թէ քաղաքագլուխն եւ վարչութեան անդամները դատի են ներկայված պատժադրքի հետեւեալ յօդուածներին հիման վրա—քաղաքագլուխ Գ. Գ. Եւանգուլով 411 եւ 412 յօդուածներին հիման վրա, քաղաքային վարչութեան նախկին անդամ Իշխան Ա. Մ. Արղուիւեան—411, 417, 337, 341 եւ 409 յօդուածներին հիման վրա, յոյն վարչութեան նախկին անդամ Խ. Ս. Վերմիշել 411 եւ 409 յօդուածներին հիման վրա եւ վարչութեան այժմեան անդամ Ե. Ն. Խոսրոսով—411-րորդ յօդուածի հիման վրա: 411-րորդ յօդուածը, որի զօրութեամբ դատի են ենթարկված քաղաքագլուխն եւ վարչութեան անդամները, նախատեսուած է ծառայական կարեւոր զանցանութիւնները, որոնց հետեւանքը յիշուած են

անկայանի անկարգութիւններ գործերի մէջ: Այդ յօդուածի մէջ յիշված յանցանքները պատժվում են յանդիմանութեամբ, հանելով ծառայութեան ժամանակի հաշիւը 3 ամիս կամ առ առաւել մէկ տարի եւ կամ արձակելով պաշտօնից:

Մեզ խնդրում են յայտնել հետեւեալը. «Գումարէնք» ընկերութեան ընդհանուր ժողովը, որ նշանակված էր առաջին անգամ ապրիլի 18-ին քաղաքային վարչութեան դահլիճում, չը կայացաւ, ուստի ընկերութեան երկրորդ ժողովում, որ նշանակված է Ռիֆլիսի քաղաքային վարչութեան դահլիճում, մայիսի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին, նիստը համարվելու է օրինական, որքան եւ լինեն ժողովականները թիւը. այդ ժողովում պէտք է տեղի ունենան ընտրութիւններ:

Մի երկուստար, որ ուսել է Գերմանիայի վիլհելմսդորֆի դպրոցում, ցանկանում է մտնել Լէյպցիգի բարձրագոյն արհեստագիտական դպրոցը, ուր մի տարվան մէջ պիտի սովորի գործնական ատաղձագործութիւն եւ ճարտարակազմութիւն: Զրկված լինելով սեփական միջոցներից՝ նա իր յոյսը դրել է բարեգործների վրա: Ուսման դասընթացը պէտք է տեւէ մէկ տարի եւ կը պահանջէ ծախք 650 ռուբլի:

Թիֆլիսի նահանգական վարչութիւնը մօտ օրերումս ուղարկեց ներքին գործերի մինիստրութեանը հաստատելու Ռիֆլիսում էլէքտրական լուսաւորութիւն կազմակերպելու նախագիծը՝ էլէքտրո-տեխնիկ Պոլեմեմովի եւ նահանգական վարչութեան շինարարական բաժանմունքի եղբայրացութիւններով: Ներքին գործերի մինիստրութեան հաստատութիւնը ստացելուց յետոյ, քաղաքային վարչութեան «Հէլիոս» ընկերութեան հետ կապած պայմանի գործութեամբ, այդ ընկերութիւնը պարտաւոր է վերջացնել էլէքտրական լուսաւորութեան նախապատրաստական բոլոր աշխատանքները մի տարի եւ երեք ամսվայ ժամանակամիջոցում: Գիտնական միւս քաղաքների փորձերից, որ մինիստրութիւնը երկու ամսից աւելի է պահում այդ տեսակի նախագծերը, կարելի է յոյս ունենալ, —ասում է «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագիրը, —որ 1902 թվականի աշնանից Ռիֆլիսի եթէ ոչ բոլոր փողոցները, գոնէ գլխաւորները կը լուսաւորվեն էլէքտրականութեամբ:

ԱռԱՆՔԱՆԱԿՅՈՒՄ մեզ գրում են, «Մեր գաւառի համարեա ամբողջ երկարութեամբ հոսող Թափարվան կամ Փարվանա գետի վրա ընդամենը երկու-երեք կանոնաւոր կամուրջ կայ չինած: Մնացած տեղերում գետի մի կողմի արգելանքով ձգտելով հարթելու է միւս կողմի հետ տեղ-տեղ գետի վրայով գցած գերաններով, որ շատ վտանգաւոր է, մասնաւոր, երբ ամբողջ խմբերով են անցնում, ինչպէս տեղի է ունենում ուստաղացութեան ժամանակ: Մօտ օրերս մի դժբաղդութիւն պատահեց գետի վրայով գցած աղապիւրի մի գերանով անցնելու ժամանակ Դէպքի օրը Չուշլա վրացի գիւղի բնակիչները ուխտ էին գնում Սարոնոպէս վրացի գիւղը. ուխտաւորներից յետ մնացած մի 13—14 տարեկան աղջիկ եւ իրանց ասն ծառան, մի 17 տարեկան պատանի, միմեանց փէշից բռնած՝ սկսում են գերանի վրայով անցնել, բայց անփորձութիւնից չարունակ նայում են ջրին, որից խեղճերի գլուխները պոյտ է գալիս եւ ընկնում են միմեանց փէշից բռնած՝ մէկը գերանի մի կողմով, ինչ միւսը՝ հակառակ կողմով: Երկուսը ժամանակ մնում են կախված՝ միմեանց փէշից բռնած՝ եւ օգնութիւն են կանչում, աղաղակում են, բայց լռեցնելով խեղճներ ընկնում են ինքնային գետի կատաղի ալիքների մէջ: Պարանից յետոյ շուտով վրայ են հասնում գիւղացիները, երկուսին էլ հանում են ջրից ուշաթափված: Սոսապութեան տալով անբաղդ ծագային՝ աշխատանք են միայն աղջկան ուղքի բերել, թէեւ, ասում են, դեռ ընտրված է համարեա, իսկ խեղճ պատանին մեռնում է:

Մեծ-ԱՐԽԱՆԻՍ գիւղից (Ալեքսանդրօպոլի գաւառ) մեզ գրում են. «Անասունների հիւանդութիւնը կարծես մի քիչ թուլացել է: Չորրորդ օրն է, որ իւրաքանչիւր գիւղից այրում են օրական 4—5 հիւանդ անասուններ: Դեռ անպարտաւոր բոլորովին փակված են գոմերում: Նրանց պաշարեղէնը բոլորովին սպառվել է. եթէ մի քանի օր էլ ուշ թողնելու լինեն արածելու, շատ անասուններ քաղցից կը կո-

տորվեն: Այսօր անասնաբոյժ պ. Վինոգրադով այդ մասին հետազոտվ միջոցառեց նահանգական պ. անասնաբոյժի առաջ: Յանքի ժամանակն անցաւ: Եթէ մինչեւ ապրիլի վերջը թոյլ չը տան ցանքս անելու, այլ եւս չէ կարելի գարի անգամ ցանել: Ժողովուրդը, գլուխը կորցրած, չը գիտէ ինչ անել: Մօտակայ գիւղերի անասուններն եւս ենթարկվեցին անասնաբուժական հետազոտութեան: Այժմ այս կողմերում կան չորս անասնաբոյժներ եւ անասնաբուժական ինստիտուտի մի քանի ուսանողներ:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ուղտն-օրա գիւղում վախճանվում է Թաղէոս քանանա, որի թաղման օրը մեծ իրարանցում է տեղի ունենում հասարակութեան մէջ, չնորհիւ հոգեւոր կառավարութեան անգամ Յ. քանանայի անվայել եւ անարդար վարմունքի: Արժանապատիւ անգամը իրան թոյլ է տալիս կողոպտելու իր հանգուցեալ ընկերոջը, որը իրանից յետոյ թողնում է 4—5 հարիւր ռուբլի պարտք եւ ինչո՞ք ու երկամայ երեւիսային համարեա կիսաքաղցած դրութեան մէջ: Անգամ Յ. քանանան նախ քան թաղումը, պահանջում է այրի տիրուհուց 40 ռուբլի (20 ռուբլի—հոգեբաժին, իսկ 20 ռուբլի—աթուղաւորի հանգուցեալի ծածուկ կատարած երկու պահանջից), եւ այդ պատճառով վեց ամբողջ օր դիակը թողնում է եկեղեցում մի այնպիսի ժամանակ, երբ դրում օրի տաքութիւնը հասնում էր 18—20° Բ. երկար անհամութիւններից յետոյ գիւղացիները ճարահատեալ իրանց մէջ հանգուցեալում են հոգեբաժին 20 ռուբլի եւ թախանձում են Յ. քանանային, որ բաւականաչափ եւ ազատ է իրանց արդէն լուծված գիւղի տարածած գարշաւոտութիւնից: Այլ եւս դիակը պահել անկարելի համարելով, Յ. քանանան ճարահատեալ համաձայնվում է թաղումը կատարել, մնացած քան ռուբլին ապագիկ հաշիւով եւ պատուրբով ժամանակաւոր հովուդ քանանային, որ այրի տիրուհուն հասանելի արդիւնքից պահէ: Ուղտն-օրէցից անցեալ չաբաթ մի ընդհանուր բողոք ներկայացրին հոգեւոր բարձրագոյն իշխանութեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՍԵՑ

Վան, մարտի 31-ին
Վանի մէջ խմբակ մը կայ, խելքով ու մտքով կաշկանդուած մտնող խմբակ մը, որուն ինքնաբէր է ամեն պարագայի տակ ու ամեն միջոցներով ազգային գործերուն ղեկը իր ձեռքը ունենալ: Գովիւր, բայց ոչ-օգտակար նպատակ մըն է այս, երբ կոյր մոլեգանդութիւնը իրմէ դուրս քրքրեմք մը ճանչնալու կամ գնահատելու երբէք չի գիշաներ, ըստ որում անարժան անձերու գործի մէջ մտնելուն եւ գործին անպատուութիւն ու վնաս բերելուն պատճառ կը դառնայ: Վանի Մաֆիան է այս, իտալական այն հոշակաւոր աւազակախումբը, որուն կանդամակցին նաեւ ծերակուրակաւաններ, զինուորականներ եւ ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաներ, իւր արտաքին իրաւունքները իտալիայի ամեն կողմերը ցրված կը կողոպտեն: Սեփական աւազակապետներու գլխաւորութեամբ:

Վարազայ որբանոցը շատ բան կը պարտի մեր այս կղզեացի Մաֆիա-խմբակին, որուն ձեռնառնութեան էր այն արարչական տեսլիչը— Յովհաննէս Վալուղեան—որ իր ուսուցչական խմբակ խայտառակութեանց գազաթնակէտէն ծանր չառաչումով մը կիսնայ իր սրբած ու սքանչելի պաշտպաններուն գիւղէ՝ անոնց բերանն ալ բաց թողնելով:

Նախորդ նամակովս գրած էի ձեզ Վարազայ ծանրակշիռ դէպքը, հապճեպու համառօտ կերպով մը: Այսօր ուրախ եմ յայտնելու, որ տեղւոյն հոգաբարձութիւնը, առանց կաշկանդուելու իր 1—2 անդամներուն տեսուչին հետ ունեցած խնամակալ կապերէն եւ մէկըի վանելով ամեն նեղ մտածում, գովելի քաջութիւնը կուենայ Վարազայ մարմինին վրայէն կտրել հանելու փութութիւն սպառնացող ամեն վէճը ու պայքար, եւ բաց ձակառոտով ու հանդարտած խղճով ներկայանալու հասարակութեան, մահամբձ մը ազատող ճարտար բեռնիկ մը ամբողջ գոհունակութիւնով եւ հասարակութեան սպասելիք քաջաբերականով: Իմ կարծիքով, մենք այս տեսակ պարագաներուն աւելի պարտաւոր ենք քաջալեր դառնալ, նկատելով որ, առանց պահելու յայտնուած այս վէճը եւ կորովի ձեռքով մը անոր բուժումը կրնայ թէ իրանց թէ՛ տարբեր հոգաբարձութիւններու կամ խնա-

մակալութիւններու գրգռե դառնալ, ունեցած պակասութիւններն առանց ամչնալու կամ քաշկու չտկելու: Գիտէ՞ք, շատեր կան որ կը մտածեն, թէ աղբը ու բարերարները այս յայտնութիւններէն կրնան խրտչել ու չօգնել, սակայն մենք տարբեր կը խորհնեմք. անոնցմէ, որոնք այս տեսակ ծուռ մտածումով մը կրնան վէճերնին պահել ու օր մը ամբողջ մարմինով մը կախալացած ու փտած մեր առջեւ ելնել, Ձեք որ այդ պարագային բարերարները յուսախաբ կըլլան բոլորովին, մինչ հիմա կրնան մտածել, թէ ամենքն տիպար հաստատութիւններն իսկ իրենց պակաս կողմերը ունեն, բաւական է որ անոնք բանալու ջանքը ըլլայ միշտ:

Մինչդեռ այդ մեռած տեսուչն ու հանգուցեալ ուսուցիչները, իրար վրայ ծանր ամբաստանութիւններ ընելով, իրենց փտած բարոյականին ամբողջ մերկութիւնը կը պարզեն, անդին հոգաբարձութիւնը թախանձագին դիմունքով հալկական վարժարանի կարող ուսուցիչներէն պ. Օ. Բարադանեան տեսուչութեան, եւ Սանդիսեան վարժարանի ուսուցիչ պաշտօնով Վարազ կը տանի, ուր ան հերկու շաբաթ է ի վեր դառախաւորութիւնները վերսկսած են կանոնաւոր կերպով: Նոր տեսուչն ու իր օգնականը ամեն համակրանքի ու վստահութեան արժանի են, իրենց խիստ արդիւնաւոր անցեալով, հետեւաբար յաւաքեց պաշտպանի մը փոփոխել հեռապատկերը ընծայելով այժմէն:

Ամսիս 26-ին տեղիս Դոմինիկեան հայրերէն պէն Ժակ Պարալաւան քնաց, կը լուրի թէ հոն գտնվող քաղաքացի (ասորի-կաթօլիկ) եպիսկոպոս մը իր ժողովրդով օրթօքօս եղեր է՝ ռուսական աղղեցութեան հոն աւելնալուն պատճառաւ: Պէն Ժակ կերթայ ատոնց դիմաց առնելու: Իրեն կրնկերանայ Աւետիս ք. Շաղոհան՝ իր ընտանիքը հոս փոխադրելու նպատակաւ: Սակայն հաղորդուած ատոյց տեղեկութեան մը համեմատ, Շաղոհան իր փեռն երազները եւ իր վրա գրուած դատարկ յոյսերը չի կրնալով իրականացնել՝ ներկայ պատրուակով կը հեռանայ Վանէն ու դժուար թէ կրկին վերադառնալ ուզէ՝ մտաբերելով ժողովրդէն զտած խիստ ցուրտ ընդունելութիւնը: Կը լուրի, թէ տեղիս կաթօլիկներու միջեւ եղած գոտութիւններու առթիւ, Շաղոհան, քան. Նաթանեան եւ Բիւզանդեան անուն յայտնի կեղտոտ անձերուն կողմը բռնելով, ժողովուրդն ու Դոմինիկեան հայրերը իրեն դէմ գրգռած են եւ քանազան կոհեմներու ալ պատճառ եղած, որուն հետեւանքով պատաւար կերպով մը կծիկը դնել կուզէ ասկէ՝ խայտառակ չըլլալու համար: Գէշ խելք չէ:

Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

—Հոսից գրում են «Daily News» լրագիրն, թէ որքան աւելի մօտենում է երեքշաբտեան դաշնակցութեան վերանորոգման ժամանակամիջոցը, այնքան աւելի գերակշռութիւն է ստանում իտալական հասարակական կարծիքի մէջ այն հոսանքը, որ եթէ վերանորոգումը անխուսափելի է, գոնէ այդ դէպքում նրա պայմանները աւելի նպաստաւոր լինեն Իտալիայի համար, քան այժմեան պայմանները: Առանձին կապիտոլ իտալացիները նայում են Աւստրիայի գործունէութեան վրա Բալկանեան թերակղզում եւ Ադրիատիկային ծովեզերքներում, որովհետեւ Աւստրիայի դիտաւորութիւնները Ալբանիայի վերաբերմամբ ոչ ոքի համար գաղտնիք չեն: Իտալիայի հասարակական կարծիքը հակվում է դէպի այն, որ եթէ Ադրիատիկային ծովեզերքներում պէտք է տեղի ունենան փոփոխութիւններ, նրանք պէտք է լինեն յօդուալ Իտալիայի: Այդ հարցն աւելի եւս շահագրգիռ է դառնում իտալացիների համար չնորհիւ այն հանգամանքի, որ Իտալիայում կան այժմ մօտ 200,000 ալբանացիներ, որոնք պահպանել են անկորուստ իրանց ազգութիւնը, լեզուն եւ սովորութիւնները: Ալբանական ազգային միութեան պարագային Իտալիայում, Լորէկիո, ասաց անգլիական լրագիր թղթակցին, թէ Ադրիատիկային ծովը պէտք է բացառապէս ալբանո-իտալական լինի եւ թէ ալբանացիների համար ոչ մի պետութեան գերիշխանութիւն ցանկալի չէ: Լորէկիոյի ասելով՝ Աւստրիան իր գործունէութեան մէջ Բալկանեան թերակղզում աջակցութիւն է գտնում Վատիկանի կողմից:

—Անգլիացիները անցած ապրիլ ամսին մի անակնկալ գիւտ արին հարաւ-աֆրիկական պատերազմի բեռում: «Times» լրագիր թղթակցի ասելով, Պէյտնէյի գործարիւնը բոլորական չըլաններից մէկում գտաւ Տրանսվալի պետական արքիւշը եւ շատ բանկային տոմսեր, մօտ 1,250,000 ֆրանկի արժողութեամբ, որոնք Տրանսվալիան կառավարութեան վերջին փոխառութեան մի ամսն են կազմում: Արքիւշը գտնվեցին թղթակցութիւններ, որ գրել էին Շալկ-Բուգէր եւ Բէյց բոլորական զօրապետ-

ներին, նոյնպէս եւ Դէվէտի ու Բօտայի նահանգները: Վերջինների մէջ խօսքը բօլորական արշաւանքի մասին է դէպի Կապի գաղթականութիւնը: Գտնված են նոյնպէս ցուցակներ այն բուրգէրների անուններով, որոնք շարունակում են պատերազմական գործողութիւնները եւ անգլիական զինուորական հեռագրիները, որոնք գրաված են, ըստ երեւոյթին, մի օր եւ իւրտակված գնացքի ժամանակ:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ
30 ապրիլ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ապրիլի 30-ին արտասահմանից ժամանեցին Պետերբուրգ Մեծ-Իշխանուհի Մարիա Պաւլօվնա եւ Մեծ-Իշխանուհի Երեմա Վլադիմիրովնա:

ԲԵԳԱ. Ապրիլի 28-ի գիշերը՝ լոյս 29-ը, Տուլայի ճանապարհի վրա բոլորովին այրվեցին երեք տուն եւ մասամբ—երկու տուն: Վնասը մեծ է, բայց դեռ եւս չէ որոշված: Այրվածի միայն մի մասն էր ապահովագրված: Ապրիլի 30-ի գիշերը Կոչնիսովի ճանապարհին սկսեցին այրվել Մայմիլի եւ Դուբրովկո սոցարանը եւ փայտեղէնի պահեստը: Հրդեհը հազցնելու համար գործում են երեք չոգչաթով մեքենաներ: Այսօր, մինչեւ կէսօր, վնասը արդէն բաւականին նշանաւոր էր, բայց դեռ եւս ճշտութեամբ չէ որոշված:

ԱՍՏԻՍԱՆ. Այսօր հանգրիս այն հրդեհը, որ ծագել էր գիշերը, ապրիլի 29-ին, Վոլգայի վրա, քաղաքի մօտ: Այսօր պաշտօնապէս հաստատված է, որ հրդեհը սկսվել է Մակարովի փայտեղէնի պահեստ-նահանգաւոր, որտեղից ուսեղ քամու միջոցով զլված փայտի կտորները ընկել են Դէվիլի, Մօրօզովի եւ Չեմսկովի նաւային կարաւանի վրա ու հրդեհել են նրան: Բոցավառվող մագուղը տարածվել է Վոլգայի վրա: Այրվեցին Մակարովի փայտի պահեստից 100,000 ռուբլու չապահովագրված փայտեղէններ եւ 16 բեռնաւանակ, որոնք տանում էին փայտեղէն եւ նաւթ, 200,000 ռուբլու արժողութեամբ: Կարծում են, որ հրդեհը զիտմամբ է գցված: Դժբախտութիւններ մարդկանց հետ չը պատահեցին:

ԳՐՕՒՆՈ. Հրդեհը Բրեստում դադարեց. այրվեցին մօտ 500 տներ, որոնց թւում պատահեաւորապէս գրաքննակի, բանտի, աղետականութեան պարագլխի դիւանատան եւ դիւնոտրական դիւանի շինութիւնները: Կաղժարակրկված է կոմիտէտ հրկիզեալներին օգնութիւն հասցնելու համար:

ՇԱՆԳԱՅԱՅ. Ապրիլի 21-ին հրատարակված է կայսերական հրաման, որով պատիճներ են նշանակված այն անձանց, որոնք մասնակցել են Չժուչժօուում տեղի ունեցած կոտորածներին: Նահանգապետ Յիզիւն—Լիւչժուգան եւ տասուայ գեներալ Պաօ արձակված են պաշտօնից: Ինչպէս, նահանգի գաւառների կառավարիչը, զատապարտված է օտաւանակի արշաւանքներից ցմահ պատառնելու ճանապարհների վրա, իսկ թիկնապահների կապիտան Չժուչժօու դատապարտված է զրկուման: Այս պատիճները իրանց մեղութեամբ ամենեւին չեն քաւում անգլիական հպատակներին, որոնք արդարեւ, կանաչ եւ երեխաների կողմի կոտորածը: Շանգայում սաստիկ վրդովված են այն բանից, որ իսկական յանցաւորները խուսափեցին պատիճից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Չը նայելով վերջին կորուստներին՝ բօլորական զօրքի թիւը հաշվում է դեռ եւս 16,500 զորք: Արեւմտեան կողմում նրանք ժողովում են ուսեղ զօրաբաժիններ. նրանք դեռ եւ թնդանութիւններ եւ ռազմավարքի պակասութիւն են գգում: Դէվէտ նորից խուժեց Տրանսվալի սահմաններից ներս 2,000 մարդով:

ԱԲԲԱՑԻԱ. «Պարա» չըլանաւ, որ իրա գտնվում է յունական թագաւորը, առաւօտեան երեւաղ նաւահանգաւորի դիմաց, բայց ջրի ծանծաղութեան պատճառով ստիպված էր խալիսից ցցել նաւահանգաւոր պատնէշից դուրս: Նահանգապետը ուղեւորվեց չըլանաւ եւ ողջունեց թագաւորին աւստրիական կայսրի կողմից: Բուլկանական թագաւորի աղիւտանալողը ջունեց Գէօրգ թագաւորին կարլ թագաւորի անունից:

ՍՏՈՂՈՒՄ. Պատգամաւորների ժողովը ձայների մեծամասնութեամբ ընդունեց զինուորական նախագիծը այն խմբաբաժնեւոր, որ ընդունել էր սէյմի մասնաժողովը. փոքրամասնութիւնը իր քուէները տուեց յօդուալ կառավարչական օրինագծի անփոփոխ խմբաբաժնեւոր:

1 մայիս
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մայիսի 10-ին, Թագաւոր կայսրի ներկայութեամբ, Պետերսօֆում տեղի

